ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք, 2-րդ փողոց 2-րդ փակուղի շենք 1,
Հեռ. 0222-6-33-50, էլ. Փոստ katnaxbyur@mail.ru

N 49

«19»«06» 2012թ.

ՀՀ Կոտայքի մարզպետ
Պարոն՝ Կ. Շահգալդյանին

Հարգելի պարոն Շահգալդյան

Ձեզ ենք ներկայացնում Կաթնաղբյուր համայնքի հաշվետու համայնքային ժողովի արձանագրությունը:

Առդիր 3 թերթ:

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար՝ **Ք. Ասատրյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

18.հունիսի. 2012թ. **գյուղ Կաթնաղբյուր**

2012թվականի հունիսի 18-ին Կաթնաղբյուրի գյուղապետարանում տեղի ունեցավ Կաթնաղբյուր համայնքի հաշվետու ժողովը:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ

1. Անանիկ Գաբրիելյան
2. Արամայիս Համբարձումյան
3. Նվեր Մկրտչյան
4. Լևոն Դանիելյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Համայնքի ղեկավարի տեղակալ Լ. Ասատրյան
2. Աշխատակազմի քարտուղար Գ. Մկրտչյան
3. Առաջատար մասնագետ Վ. Ղազարյան
4. Առաջատար մասնագետ Գ. Հարությունյան
5. Առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան

Մասնակցում էին համայնքի 38 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2011թվականի 2-րդ կիսամյակի և 2012թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Ք. Ասատրյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին»,«Համայնքային ծառայության մասին»

օրենքներով և այլ իրավական ակտերով Կաթնաղբյուր համայնքի աշխատակազմը որոշ աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:
Համայնքային ծառայության աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով, բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքացիների ընդունելությունը համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը:
2011թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեն կատարվել է 101,6 %-ով: Համայնքը ֆինանսական պարտավորությունները չունի:

Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ կազմվել է համայնքի ոռոգման ցանցի, եկեղեցու վերանորոգման համար անհրաժեշտ նախագիծ-նախահաշիվները,
Խճապատվել է 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների անանցանելի մասերը:
Գյուղապետարանի շենքի համար ձեռք է բերվել դուռ և պատուհաններ:
Գյուղապետարանի շենքի դռան և պատուհանների համար ձեռք է բերվել ճաղավանդակներ:

Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է համայնքում առկա է 197.61 հա գյուղ նշանակության հողատարածք, որից վարելահող 109,39, արոտ 42,31 հա,այլ հողել 45,91 հա: Վարձակալությամբ հատկացվել է 21,3 հա:
Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայնությունը:
Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:
Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ.

1. Համայնքի բնակիչներ Հարություն Ղազարյանը, Մխիթար Ադամյանը, Մնացական Հովհաննիսյանը, Սարգիս Հարությունյանը Արմեն Խաչատրյանը, Գայանե Հարությունյանը, Մխիթար Գեղամյանը, որոնք համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեցին դրական և իրենց դժգոհություն արտահայտեցին համայնքի գերեզմանոցի կամուրջի վատթար վիճակի, գերեզմանոցի հանգստյան քարի բացակայության մասին:
2. Համայնքի 4-րդ փողոցի բնակիչներն իրենց դժգոհություն արտահայտեցին համայնքի 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչները առաջարկեցին համայնքի ղեկավարին բարելավել աշխատանքներն համայնքի համայնքի գերեզմանոցում հանգստի քարի

տեղադրման, գերեզմանոցի կամուրջի վերանորոգման, համայնքի 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման հարցերի լուծման ուղղությամբ:

ՈՐՈՇՎԵՑ

1) Համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն
2) Ակտիվացնել աշխատանքները համայնքի գերեզմանոցի հանգստի քարի, կամուրջի վերանորոգման և 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման հարցի լուծման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Ք. Ասատրյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին: Նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայնքի աշխատանքային ներքին կարգապահությունը:
Աշխատակազմի ամենօրյա աշխատանք է համարվում հարկերի հավաքագրումը, քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը:
Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի սանիտարական մաքրության ապահովման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումներն ընդունել ի գիտություն:

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար՝/ / Ք. Ասատրյան